1921 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ ՆԱԽՈՐԴԱԾ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Փետրվարյան ապստամբության 90-ամյակի առիթով*

1920 թ. դեկտեմբերի 2-ին Դրաստամատ Կանայանի (Դրո), Համբարձում Տերտերյանի և Հայաստանի Հանրապետությունում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանի միջև Երևանում ստորագրված համաձայնագրի հինգերորդ կետը հստակորեն երաշխավորում էր, որ ՀՅ Դաշնակցության և մյուս սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչները հալածանքների չպետք է ենթարկվեն մինչև երկրի խորհրդայնացումը կատարած գործողությունների համար: Նախքան Հայհեղկոմի ժամանումը Երևան, տեղում իշխանությունն անցնում էր ռազմական հրամանատարությանը՝ Դրոյի գլխավորությամբ, որին կից ՌՍՖԽՀ կոմիսար էր նշանակվում Օտտո Սիլինը[1]:

Սակայն բոլշևիկյան իշխանությունները չկատարեցին Երևանի համաձայնագրով ստանձնած պարտավորությունները և հետագա շաբաթներին ձեռնամուխ եղան լայնածավալ բռնությունների իրականացմանը: Բնակչության շրջանում առանձնապես մեծ դժգոհություն առաջացրեց «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը և վերջինիս կարևոր մասը կազմող պարենմասնատրումը, որի արդյունքում առանց այդ էլ աղքատ գյուղացիներից բռնագրավվում էր նրանց հացի «ավելցուկը», ինչպես նաև ՀՀ բանակի շուրջ 1400 սպաների աքսորը:

Սակայն բոլշևիկյան բռնությունների շղթայում առանցքային օղակը ՀՅ Դաշնակցության անդամների նկատմամբ իրագործվող հալածանքն ու զանգվածային ձերբակալություններն էին: Ներկայումս արդեն հայտնի փաստ է, որ նախքան Երևանի համաձայնագրի ստորագրումը, ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը կազմել էր խորհրդային իշխանության հաստատումից հետո անմիջապես ձերբակալման ենթակա ղեկավար գործիչների ցուցակներ: Այս գործն իրականացնելու էին գաղտնի Երևան ժամանած չեկիստները: Այսպես՝ արդեն դեկտեմբերի 2-ին Բ. Լեգրանը, խախտելով իր իսկ ստորագրած համաձայնագիրը, հրաման է արձակել ՀՀ Բյուրո-կառավարության անդամների և մի շարք «հակահեղափոխական գործիչների»՝ Համո Օհանջանյանի, Սարգիս Արարատյանի, Արտաշես Չիլինգարյանի (Ռուբեն Դարբինյան), Մինաս Տեր-Մինասյանի (Ռուբեն), Արշակ Ջամալյանի, Գևորգ Ղազարյանի, ՀՀ պահեստային միլիցիայի նախկին պետ Լևոն Քալաթարյանի, հայդուկապետ Համազասպ Սրվանձտյանցի, Նոր Բայազետի նախկին գավառապետ Բենո Նալչաջյանի, հայտնի սոցիալ-

* Ընդունվել է տպագրության 21.02.2011:

1 Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Եր., 2000, էջ 383-384:

դեմոկրատ (սպեցիֆիկ) Բախշի Իշխանյանի և ուրիշների ձերբակալման մասին[2]: Նշված գործիչներից Սարգիս Արարատյանին, Արշակ Ջամալյանին և Գևորգ Ղազարյանին հաջողվեց անցնել Թիֆլիս, իսկ Ռուբենն ու Լևոն Քալաքարյանը մեկնեցին Զանգեզուր: Մյուսները ձերբակալվեցին:

Բանտարկվեցին նաև հայտնի դաշնակցական գործիչներ Վահան Նավասարդյանը, խորհրդարանի նախկին նախագահ Ավետիք Սահակյանը, անդամներ Վարոս Բաբայանը, Հովսեփ Տեր-Դավթյանը, Գևորգ Վարշամյանը, Թադեոս Թոշյանը, Արշակ Ղազարյանը, Երևանի քաղաքային խորհրդի նախկին անդամ Արշալույս Աստվածատրյանը, գնդապետ Նիկոլայ Ղորղանյանը, նախկին վարչապետ Հովհաննես Քաջազնունին և ուրիշներ: Իր զբաղեցրած պաշտոնից ազատվեց և 1921թ. հունվարի 10-ին Մոսկվա ուղարկվեց Դրոն: Ձերբակալությունից ազատ մնացածները թաքնվել էին: Նրանց թվում էին Սիմոն Վրացյանը, Սիրական Տիգրանյանը, Արշակ Հովհաննիսյանը և ուրիշներ:

Այս համատարած բռնություններին ի պատասխան՝ բանտարկությունից խուսափած ՀՅԴ գործիչների և դաշնակցական խմբապետների ղեկավարությամբ գավառներում առաջ եկան գաղտնի խմբեր: ՀՅԴ անդամները շարժմանը կազմակերպված բնույթ էին հաղորդում և միավորում էին այդ խմբերին՝ ընդհատակյա գործունեություն ծավալած Երևանի Հայրենիքի փրկության կոմիտեի շուրջ[3]: Սկզբնական շրջանում սոսկ խնդիր էր դրված չեկայի ճիրաններից ազատել բանտարկյալ դաշնակցականներին, բայց հետագայում շարժումը վերածվեց խորհրդային իշխանության տապալմանն ուղղված հուժկու ապստամբության:

Սիմոն Վրացյանի վկայությամբ՝ Փետրվարյան ապստամբության համար անմիջական առիթ դարձան 1921թ. փետրվարի 9-ի գիշերը և 10-ին Երևանում արտակարգ հանձնաժողովի կատարած զանգվածային ձերբակալությունները[4]: ՀԿ(բ)Կ Կենտկոմից օգնության ուղարկված 20 կոմունիստների օժանդակությամբ մեկ գիշերվա ընթացքում ձերբակալվեցին 88 «հակահեղափոխականներ», որոնց թվում էին Լևոն Շանթը, Նիկոլ Աղբալյանը, Արմենակ Մաքսապետյանը, Գառնիկ Քալաշյանը: Ձերբակալությունների առիթ էր հանդիսացել չեկայում ստացված այն տեղեկատվությունը, թե իբր՝ խորհրդային հասարակարգի որոշ «թշնամիներ» պատրաստվում են գիշերը փախչել քաղաքից[5]: Փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը չեկան ձերբակալեց ևս 18 «հակահեղափոխականների», այդ թվում՝ հայտնի դաշնակցական գործիչներ Հովսեփ Թադևոսյանին և Մկրտիչ Մուսինյանին:

Սակայն այս քայլերը չկարողացան կանխել հակախորհրդային ապստամբությունը: Ընդհակառակը, փետրվարի 13-ին Կոտայքի Զառ գյուղում տեղի ունեցավ ՀՅԴ ղեկավար գործիչների ու խմբապետների խորհրդակցություն, որը որոշում ընդունեց փետրվարի 16-ին ապստամբություն բարձրացնելու վերաբերյալ՝ զինված ուժերի հրամանատար նշանակելով գնդապետ Կուռո Թարխանյանին: Այս մասին տեղեկացվեցին Երևանի, Զանգիբասարի, Ծաղկաձորի և Արագածի ապստամբական ուժերի ղեկավարները[6]: Ժողովի հաջորդ օրը՝ փետրվարի 14-ին,

2 Տե՛ս Վիրաբյան Ա., Հ. Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալման մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2009, N 1, էջ 107-110:
3 Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 559:
4 Տե՛ս Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 559:
5 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու», խմբ. կոլեգիա՝ Ա. Ն. Մնացականյան և ուրիշն., Եր., 1960, էջ 480:
6 Տե՛ս Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, Պէյրութ, 1970, էջ 82:

ՀՅԴ Բյուրոյի անունից Փարիզում գտնվող ՀՀ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին ուղղված իրենց նամակում Ա. Ջամալյանը և Գ. Ղազարյանը հայտնում էին, որ ստեղծված իրավիճակում ժողովրդի համար կենսական պահանջ է դարձել խորհրդային իշխանության տապալումը և ապստամբությունն իրագործելու համար առաջ էին քաշում պատվիրակության տրամադրության տակ գտնվող միջոցներից խոշոր գումար ուղարկելու խնդիրը[7]: Եվ արդեն փետրվարի 16-ին ՀՅԴ ղեկավարությամբ սկսվեց Փետրվարյան ապստամբությունը ...

Այս իրադարձությունների ճշգրիտ պատկերը վերականգնելու և ամբողջացնելու համար ստորև առաջին անգամ հրապարակվում են Հայաստանի արտակարգ հանձնաժողովի (չեկա) 1921թ. փետրվարի 12-ի երկու ամփոփագրերը՝ փետրվարի 9-ի գիշերը և փետրվարի 10-ին ու 11-ի՝ լույս 12-ի գիշերը կատարված ձերբակալությունների մասին (փաստաթղթեր N 2 և 3): Դրանք լույս են սփռում նաև Փետրվարյան ապստամբության նախօրեին բոլշևիկների կողմից իրագործված բռնությունների ընթացքի վրա: Քանի որ չեկայի այս երկու ամփոփագրերը բխում են Հայհեղկոմի նախագահ Սարգիս Կասյանին ուղղված Շավարշ Ամիրխանյանի փետրվարի 13-ի «հույժ գաղտնի» մակագրությամբ զեկուցագրից, նպատակահարմար ենք համարում վերահրատարակել այն (փաստաթուղթ N 1): Դա անհրաժեշտ է նաև այն պատճառով, որ խորհրդային տարիներին իրականացված հրատարակության ժամանակ փաստաթղթում կատարվել է **ամենևին էլ ոչ պատահական** կրճատում:

Նկատի ունենալով այս հանգամանքը՝ վերը նշված երեք վավերագրերը հրապարակում ենք ոչ թե ժամանակագրական, այլ բովանդակային հաջորդականության սկզբունքով:

Հրապարակվող փաստաթղթերը թարգմանված են ռուսերեն բնագրերից, որոնք պահվում են Հայաստանի ազգային արխիվի 114 ֆոնդի երկրորդ ցուցակում:

Համո Կ. Սուքիասյան
պատմ. գիտ. թեկնածու

DOCUMENTS OF THE ARRESTS PRECEDING THE 18TH OF FEBRUARY 1921

On the 90th Anniversary of the February Revolt

Hamo K. Sukiasyan

7 Տե՛ս Ղազախեցյան Վ., Գևորգյան Հ., Դաշնակցության կողմից Փետրվարյան ապստամբության ղեկավարման հարցի շուրջ (նորահայտ վավերագիր), «Բանբեր Հայաստանի արխիվների», 2003, N 1, էջ 47-50:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
N 1

Հույժ գաղտնի: Հայհեղկոմի նախագահ ընկեր Կասյանին՝ Հայաստանի արտակարգ հանձնաժողովի նախագահ Ամիրխանյանից
13 փետրվարի 1921թ.

Չեկայում իմ կարճաժամկետ գործունեության ժամանակամիջոցում ես համոզվեցի, որ նման կազմակերպվածության և ուժերի առկայության պայմաններում չեկան դեռևս ի վիճակի չէ իրագործել այն լուրջ խնդիրները, որոնք դրված են նրա առջև. առաջին՝ աշխատակիցների կեսից ավելին անկուսակցականներ են և երկրորդ՝ բաժինները և ենթաբաժինները ղեկավարում են անփորձ և անպատասխանատու աշխատողներ, քննիչների և գաղտնի աշխատակիցների սուր կարիք է զգացվում, ինչը և շատ խիստ անդրադառնում է չեկայի այդչափ լուրջ աշխատանքի վրա: Շատ հաճախ հնարավորություն չի լինում ստուգելու նույնիսկ այն տագնապալի տվյալների քառասուն տոկոսը, որոնք հաճախակի ստացվում են չեկայում:

Այդ տվյալների համաձայն՝ բանդիտիզմն արագորեն ծավալվում է Հայաստանի շատ շրջաններում. ինչպես Դարալագյազի գավառում, Բաշաբարանում և Չեզոք գոտու սահմաններում: Այդ բանդիտները սերտ կապի մեջ են Երևան քաղաքի հետ: Նկատվում է նաև Երևանից տարբեր հակահեղափոխականների փախուստ այդ բանդիտների մոտ և Զանգեզուր:

Փոքրիկ դավադրություններ են հայտնաբերվել Էջմիածնում, Աշտարակում, Կոտայքում և Դիլիջանում, որոնց մասին մանրամասն տեղեկություններ դեռևս չեն ստացվել:

Սույն ամսի 8-ին ես պատրաստվում էի մանրամասն զեկույց ներկայացնել Հայաստանի հեղկոմին՝ բոլոր կասկածելի անձանց ձերբակալելու առաջարկությամբ, որոնց մասին մենք տվյալներ ունենք և նրանց կալանքի տակ պահել այնքան ժամանակ, մինչև որ կպարզվի Խորհրդային Հայաստանի տագնապալի դրությունը: Բայց հենց դաշնակների մի հետախույզ կնոջ ձերբակալությունից հետո, որը Էջմիածնից Երևան էր եկել, և հայտնի մաուզերիստ Լևոն Խանայանի ձերբակալությունից հետո, որը պատրաստվում էր մահափորձ կատարել ընկեր Աթարբեկովի[8] և ևս երկուսի, ամենայն հավանականությամբ՝ ընկեր Կասյանի և Ավիսի[9] դեմ, հետախուզությունն ինձ հաղորդեց, որ մեր թշնամիներից շատերը պատրաստվում են գիշերը փախչել: Ես որոշեցի ձեռնամուխ լինել մեզ մոտ հաշվառված բոլոր կասկածելի անձանց ձերբակալությանը, ինչը և իրագործվեց Կենտկոմից մեզ օգնության ուղարկված քսան կոմունիստների օգնությամբ: Ձերբակալությունների արդյունքում ստացվեց հարյուր վեց մարդ, բայց, իհարկե, նրանցից ոմանք ազատ կարձակվեն և արդեն ազատվում են, որովհետև մեր անկազմակերպվածության և վատ հետախուզության շնորհիվ եղան որոշ սխալներ և թյուրիմացություններ, սակայն, ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ օպերացիան հաջող անցավ: Անձամբ ես մտածում եմ նրանց կալանքի տակ պահել որպես պատանդներ:

Ինձ մոտ միտք ծագեց նաև ձերբակալել բոլոր հայտնի մաուզերիստների և դաշնակների մոտիկ ազգականներին, ինչի համար խնդրում եմ ձեր թույլտվությունը[10] (ընդգծումը մերն է՝ Հ.Ս.):

Ես ձեռնամուխ եմ եղել չեկային կից հատուկ նշանակության զորամասի կազմակերպմանը, բայց այդ զորամասի կազմակերպման գործն առաջ չի գնում, քանի որ զինվորական կազմակերպությունները չեն աջակցում: Չեկայի պահակախումբն ամբողջովին անհուսալի է: Կայազորի պետը մեզ միայն անվարժ և անկարգապահ հայ կարմիրբանակայիններ է տալիս:

Իմ պարտքն եմ համարում Ձեզ տեղեկացնել նաև, որ Երևան քաղաքից ռուսական զորամասերի բացակայությունը ոգևորում է բանդիտներին, որոնք մտադիր են հարձակվել Երևանի վրա: Անհրաժեշտ է քաղաքում ռուսա-

8 Գևորգ Աթարբեկյանը Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի Հայաստանի լիազորն էր:
9 Ավիս Նուրիջանյանը Խորհրդային Հայաստանի ռազմական գործերի ժողկոմն էր:
10 Խորհրդային շրջանում փաստաթուղթը հրատարակվել է առանց այս պարբերության: Տե՛ս "Великая Октябрская социалистическая революция и победа советской власти в Армении (сборник документов)", под. ред. А. Н. Мнацаканяна и др., Ер., 1957, с. 511-512, док. N 371. Տե՛ս նաև՝ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու», խմբ. կոլեգիա՝ Ա. Ն. Մնացականյան և ուրիշ., Եր., 1960, էջ 479-481, փաստ. N 337:

կան կայազոր ունենալ:

Ես կարգադրել եմ իմ գաղտնի բաժնին պարբերաբար Ձեզ տեղեկատու ամփոփագրեր ուղարկել:

Պարտավորվում եմ յուրաքանչյուր տասնհինգ օրը մեկ առավել մանրամասն գրավոր զեկույց ներկայացնել Ձեզ:

Սրան կցվում է սույն ամսի 9-ից մինչև 11-ը ձերբակալվածների ցուցակը:

Չեկայի նախագահ՝ Շ. Ամիրխանյան

ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 40, թ. 77-78: Բնագիր: Ինքնագիր:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

N 2

Ամփոփագիր

փետրվարի 9-ի գիշերը և 10-ին Հայաստանի չեկայի կողմից ձերբակալված և բանտարկված հակահեղափոխականների

12 փետրվարի 1921թ.

N	ազգանունը և անունը	ինչում է մեղադրվում	ծանոթագրություն
1	Լևոն Շանթ Սեղբոսի	պառլամենտի անդամ	Խորհրդային Ռուսաստան ուղարկված պատվիրակության անդամ[11]
2	Աղբալյան Նիկոլ	պառլամենտի անդամ	
3	Մաքսապետյան Արմենակ	պառլամենտի անդամ	
4	Հացագործյան Գարեգին	պառլամենտի քարտուղար	
5	Շալջյան Արմենակ	դաշնակցական ակտիվ գործիչ	
6	Շալջյան Արամ	դաշնակցական ակտիվ գործիչ	
7	Քալանթարով Թաիր	դաշնակցական ակտիվ գործիչ	
8	Մեհրոյան Գարեգին	դաշնակցական ակտիվ գործիչ	
9	Սարուխանյան Արշակ	դաշնակցական ակտիվ գործիչ	
10	Շահինյան Լիպարիտ	դաշնակցական ակտիվ գործիչ	
11	Աղաշալով Գրիգոր	դաշնակցական ակտիվ գործիչ	
12	Եղիանց Ղևոնդ	դաշնակցական ակտիվ գործիչ	
13	Զավարյան Հովհաննես	դաշնակցական ակտիվ գործիչ	
14	Աճեմյան Արմենակ	դաշնակցական ակտիվ գործիչ	
15	Տեր-Օհանով Վասիլ	դաշնակցական ակտիվ գործիչ	
16	Կյանջյանց Արամ	դաշնակցական ակտիվ գործիչ	
17	Սեկոյան Հակոբջան	դաշնակցական ակտիվ գործիչ	
18	Մանուկյան Գասպար	դաշնակցական ակտիվ գործիչ	
19	Տեր-Խաչատրյանց Գրիգոր	դաշնակցական ակտիվ գործիչ	
20	Սիմոնյան Սիմոն	դաշնակցական ակտիվ գործիչ	
21	Զարիբյան Համասփյուռ	դաշնակցական ակտիվ գործիչ	
22	Աղայանց Սեդրակ	դաշնակցական ակտիվ գործիչ	
23	Խաչատրյանց Հայրապետ	դաշնակցական ակտիվ գործիչ	
24	Վասաջյան Շավարշ	դաշնակցական ակտիվ գործիչ	
25	Խաչատուրյանց Հարություն	դաշնակցական ակտիվ գործիչ	
26	Զախարյանց Մկրտիչ	դաշնակցական ակտիվ գործիչ	
27	Բաբայան Արշավիր	դաշնակցական ակտիվ գործիչ	
28	Կարապետյանց Խաչատուր	դաշնակցական ակտիվ գործիչ	
29	Գրիգորյանց Բարսեղ	դաշնակցական ակտիվ գործիչ	
30	Խաչատուրով Սողոմոն	դաշնակցական ակտիվ գործիչ	
31	Թարվերդյան Նիկողոս	դաշնակցական ակտիվ գործիչ	

11 Պետք է լինի՝ «պատվիրակության նախագահ»:

32	Ղազարյանց Գասպար	դաշնակցական ակտիվ գործիչ	
33	Մարկարյանց Արամ	դաշնակցական ակտիվ գործիչ	
34	Խուդավերդյան Սիմեոն	դաշնակցական ակտիվ գործիչ	
35	Ստամբուլյան Արմենակ	դաշնակցական ակտիվ գործիչ	
36	Տեր-Զաքարյանց Հակոբ	դաշնակցական ակտիվ գործիչ	
37	Մովսեսյան Ալեքսանդր	դաշնակցական ակտիվ գործիչ	
38	Անաստասյան Ռուբեն	դաշնակցական ակտիվ գործիչ	
39	Արարատյան Կոնստանտին	դաշնակցական ակտիվ գործիչ	
40	Անանյան Տաճատ	դաշնակցական ակտիվ գործիչ	
41	Մանուկյան Միքայել	դաշնակցական ակտիվ գործիչ	
43	Հակոբյանց Արշալույս	դաշնակցական ակտիվ գործիչ	
43	Նավասարդյան Ստեփան	մինիստրների անձնական քարտուղար	
44	Սիրվանդյան Պետրոն	դաշնակցական ակտիվ գործիչ	
45	Տեր-Վարդանյան Գայանե	դաշնակցական ակտիվ գործիչ	
46	Ասլանյանց Աբովյան	դաշնակցական ակտիվ գործիչ	
47	Բաբաջանով Հակոբ	դաշնակցական ակտիվ գործիչ	
48	Գրիգորյան Նարիման	դաշնակցական ակտիվ գործիչ	
49	Հակոբյան Սաթենիկ	դաշնակցական ակտիվ գործիչ	
50	Գյաջունցև Հայկ	դաշնակցական ակտիվ քարոզիչ	
51	Ասլանյան Թովմաս	դաշնակցական ակտիվ քարոզիչ	
52	Քոթանջյան Սերգեյ	դաշնակցական ակտիվ քարոզիչ	
53	Շեկոյանց Սահակ	դաշնակցական ակտիվ քարոզիչ	
54	Թևոսյանց Մանյա	դաշնակցական ակտիվ քարոզիչ	
55	Տեր-Սահակյանց Եվգենյա	դաշնակցական ակտիվ քարոզիչ	
56	Սարգսյանց Լազար	ակտիվ դաշնակցական	
57	Ստեփանյանց Հովհաննես	ակտիվ դաշնակցական	
58	Ղարիբյանց Հարութիս	ակտիվ դաշնակցական	
59	Ամիրխանյան Լևոն	ակտիվ դաշնակցական	
60	Մելիք-Ստեփանյան Բաբկեն	ակտիվ դաշնակցական	
61	Խաչվանքյան Հակոբ	դաշնակցական ակտիվ գործիչ	
62	Ղարիբյան Անուշավան	դաշնակցական կանանց լիդեր	
63	Բաբայան Ներսես	դաշնակցական ակտիվ գործիչ	
64	Սողոմոնյան Մուշեղ	դաշնակցական ակտիվ գործիչ	
65	Խոջամիրյան Մակար	Դիլիջանի արտակարգ դատարանի նախագահ	
66	Սարգիսյանց Սարգիս	միությունների միության նախագահ	
67	Տեր-Մարտիրոսով Սիրակ	հայ կադետների[12] կենտկոմի անդամ	
68	Ստամբոլցյան Ելիզավետա	դաշնակցական կանանց ղեկավար	
69	Մելիք-Ալլահվերդով Բեբութ	դաշնակցական կանանց լիդեր[13]	
70	Ամիրխանով Հովսեփ	դատական պալատի նախագահ	
71	Թերլեմեզյան Արվանդ	դաշնակցական քարոզիչ	
72	Հասրաթյան Գրիշա	դաշնակցական մաուզերիստ	
73	Հասրաթյան Վաչագան	դաշնակցական մաուզերիստ	
74	Կուզյան Լևոն	դաշնակցական մաուզերիստ	
75	Յալամով Նահապետ	դաշնակցական մաուզերիստ	

12 Խոսքը Հայ ժողովրդական կուսակցության մասին է:
13 Այդպես է փաստաթղթում:

76	Պահլավունի Մեսրոպ	դաշնակցական մաուզերիստ	
77	Պահլավունի Արամ	դաշնակցական մաուզերիստ	
78	Գևորկով Նիկոլայ	դաշնակցական խուզարկու	
79	Խաչատրյանց Մինաս	դաշնակցական խուզարկու	
80	Ղազարյանց Ավետիս	-	
81	Հարությունյան Ավետիք	դաշնակցական խուզարկու	
82	Բաղրամով Մելքոն	դաշնակցական խուզարկու	
83	Քալաշյան Գառնիկ	պառլամենտի անդամ	
84	Մելիք-Դադայան Ալեքսանդր	դաշնակցական դատարանի կենտկոմի նախագահ	
85	Բաբիկյան Պարույր	մաուզերիստ	
86	----------[14] Նարիման	մաուզերիստ	
87	Տեր-Թովմասյան Առաքել	դաշնակցական ակտիվ գործիչ	
88	Տեր-Հովհաննեսով Առաքել	դաշնակցական ակտիվ գործիչ	

Ճիշտ է՝ (հետևում է Շ. Ամիրխանյանի ստորագրությունը)

ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 40, թ. 75 և շրջ.: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
N 3
Ամփոփագիր
փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը Հայաստանի չեկայի կողմից
կալանավորվածների և բանտարկվածների

12 փետրվարի 1921թ.

N	ազգանունը և անունը	ինչում է մեղադրվում	ծանոթագրություն
1	Տեր-Ներսեսով Իսահակ Նիկ.	դաշնակցական ակտիվ գործիչ[15]	
2	Եսայան Մելիքսեթ Խաչատուրի	դաշնակցական ակտիվ գործիչ	
3	Ղուկասյան Պողոս Կարապետի	դաշնակցական ակտիվ գործիչ	
4	Խալաթով Գարեգին Մարտ.	դաշնակցական ակտիվ գործիչ	
5	Խալաթով Հակոբ Մարտ.	դաշնակցական ակտիվ գործիչ	
6	Խալաթով Սողոմոն Բարսեղի	դաշնակցական ակտիվ գործիչ	
7	Թադևոսյան Հովսեփ Իվանի	պառլամենտի անդամ	
8	Խանամիրյան Կոստյա Աղաջանի	դաշնակցական ակտիվ գործիչ	
9	Եսայան Արամ Միքայելի	-	
10	Խալաթով Գևորգ Մարտիրոսի	դաշնակցական ակտիվ գործիչ	
11	Հակոբյան Վահան Նիկողոսի	դաշնակցական ակտիվ գործիչ	
12	Պետրոսյան Խաչատուր	-	
13	Աղաջանյան Գարեգին	-	
14	Խաչատրյան Փիրուզի Մաթևոսի	-	
15	Խաչատրյան Լևոն	-	
16	Մուսինյան Մկրտիչ	-	
17	Տեր-Պետրոսյան Վարդգես	-	
18	Աղաջանյան Աղաջան	-	

Ճիշտ է՝ (հետևում է Շ. Ամիրխանյանի ստորագրությունը)

ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 40, թ. 76: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

14 Ազգանունը չի ընթերցվում:
15 Հարցական նշան է դրված և գրված «էսէր»: